ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԻՐԱՎԱՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Տարոն Սիմոնյանի,

քննության առնելով Պալատի աշխատակազմի կողմից մշակված իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերին հավանություն տալու, ինչպես նաև դրանք իրավասու պետական մարմիններին ներկայացնելու հարցը,

հիմք ընդունելով նշված նախագծերին կից ներկայացված հիմնավորումները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 6-րդ ենթակետի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հավանություն տալ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից մշակված՝

- ***«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.***
- ***«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.***
- ***«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին.***
- ***«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին.***

11 օգոստոսի 2018թ.
թիվ 16/12-2-Լ

- ***«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:***

2. Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնին ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման առաջին կետում նշված իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

3. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ իրավասու պետական մարմնին սահմանված կարգով ուղարկել սույն որոշման առաջին կետում նշված իրավական ակտերի նախագծերը, ինչպես նաև ապահովել դրանց հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

11 օգոստոսի 2018թ.
թիվ 16/12-2-Լ
ք. Երևան